<table>
<tr><td colspan="3"></td><td colspan="5">2023թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td rowspan="3">Հ/Հ</td><td>Միջոցառման անվանումը</td><td></td><td colspan="5">ԱՈՒՏԻԶՄ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</td></tr>
<tr><td>Միջոցառման համառոտ բովանդակությունը</td><td></td><td colspan="5">Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, կրթական վերականգնողական, մասնագիտական կողմնորոշման և զբաղվածության ծրագրերի իրականացում, մասնագետների որակավորման բարձրացում, ծնողների մասնագիտական իրազեկում, հասարակության մեջ ինտեգրման և սոցիալիզացիայի համար անհրաժեշտ ծրագրերի ներդրում կիրառելով գիտականորեն հիմնավորված մեթոդներ ու լավագույն միջազգային փորձը:</td></tr>
<tr><td rowspan="2">Կատարման ենթակա գործառույթներ</td><td rowspan="2">Կատարման ենթակա գործողությունների նկարագիրը</td><td rowspan="2">Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները</td><td colspan="4">Ոչ ֆինանսական ցուցանիշներ</td></tr>
<tr><td>Պլանավորված արդյունքը հաշվետու ժամանակաշրջանի համար</td><td>Փաստացի արդյունքը հաշվետու ժամանակաշրջ անի համար</td><td>Պլանավոր ված և փաստաց ի արդյունք ների տարբերու թյուն ը հաշվետու ժամանա կաշրջ անի համար</td><td>Պլանավոր ված և փաստացի արդյունքն երի տարբերու թյա ն պատճառը հաշվետու ժամանակ աշրջ անի համար</td></tr>
<tr><td>1.</td><td>2.</td><td></td><td>3.</td><td>4.</td><td>5.</td><td>6.</td><td>7.</td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | Աուտիզմ ունեցող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում, այդ թվում վարքի փոփոխման նպատակով շրջակա միջավայրի իրադարձությունների մոդիֆիկացում և ադապտացիա: | Սկզբնական դիտարկման և նախնական գնահատման/սկրինինգ միջոցառումները ներառում են՝<br>• Հարցազրույց և խորհրդատվություն ծնողների հետ<br>• Երեխայի վարքի ընդհանուր առաջնակի դիտարկում<br>• Երեխայի նախնական գիտելիքների և ունակությունների գնահատում<br>Անհատական ծրագրի կազմում:<br><br>Անհատական ծրագիրը մշակվում և ղեկավարվում է մասնագիտական բարձր որակավորում ունեցող ծրագրի ղեկավարների կողմից:<br>Ընթացիկ 6 ամիսից 1 տարի ժամկետում շահառուների վերագնահատում և անհատական ծրագրերի վերանայում,փոփոխում:<br>Ընթացիկ շահարուների խնդրահարույց վարքերի ռազմավարությունների վերանայում, ինչպես նաև կենտրոնում ծրագիրը ներդնող և վերահսկող Այրա Պաուլ Հեյլվեյի PhD, BCBA-D կողմից: | ✓ Զարգացման փուլերի գնահատում. Այն իր մեջ ընդգրկում է 170 «milestone»-եր, որոնք ծառայում են որպես լեզվի ուսուցման սոցիալական զարգացման հիմք:<br>✓ Խոչընդոտների գնահատում. Կենտրոնացվում է այն խոչընդոտների վրա, որոնք կարող են արգելք հանդիսանալ նոր հմտությունների ձեռքբերմանը:<br>✓ Տարածական տեղափոխելիության գնահատում.<br>Ծառայում է, որպես երեխայի կրթական կարիքների պլանավորման ուղեցույց և գնահատման չափորոշիչ:<br>***Ակնկալվող արդյունքները.***<br>• Խնդրահարույց վարքաձևերի նվազում կամ փոխարինում սոցիալապես նշանակալի վարքաձևերի:<br>• Կյանքի որակը բարելավող նոր հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Սոցիալական հմտությունների ձևավորում և զարգացում:<br>• Ակադեմիական գիտելիքների ձևավոևում և զարգացում:<br>• Շահառուների տեղափոխելիության դժվարությունների նվազեցում:<br>• Ինքնասպասարկման հմտությունների զարգացում:<br>• Ինքնախնամքի հմտություննեի զարգացում:<br>• Զգայական ինտեգրացիայի խթանում:<br>• Խաղային հմտությունների զարգացում և այլն:<br>• Մասնագիտական և զբաղվածության հմտությունների ձևավորում: | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում այդ թվում՝ | | | | | | | |
| 2.1 | Խոսքի ընկալունակության և զարգացման վաղ միջամտությունը աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների մոտ: | • Տարբեր սոցիալական իրավիճակներում աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների տարրակիան հաղորդակցման հմտությունների, խոսքի ձևավորում և զարգացում:<br>• Լսողական ուշադրության և ընկալման զարգացում:<br>• Խոսքի ընկալամանն զարգացում, հուզա-իմաստային մեկնաբանության միջոցով: Հրահանգների կատարում:<br>• Շարժողական հմտությունների ձևավորում և ժեստային հաղորդակցման զարգացում: Խոսքի օրգանների շարժողական ձևավորում:<br>• Ոչ խոսքային հաղորդակցում (ժեստային հաղորդակցություն, PODD և PECS համակարգեր): | Կենտրոնում երեխաների վոկալ իմիտացիոն համակարգը գնահատվում է VB-MAPP-ի «Վաղ էքոիկ հմտությունների գնահատման» (EESA) թեստի միջոցով (Sundberg, 2008):<br>***Ակնկալվող արդյունքները՝***<br>• Հասցեագրված խոսքի ընկալում՝ տարիքային չափանիշներին համապատասխան,<br>• Հնչյունաբանորեն ճիշտ ձևակերպել արտաբերական խոսքը,<br>• Ինքնուրույն խոսքի մեջ բառերի վանկային կառուցվածքի ճիշտ փոխանցում,<br>• Ինքնուրույն խոսքի մեջ օգտագործել պարզ տարածված նախադասություններ և բարդ նախադասություններ, ունենալ դրանք միմյանց կապելու և որպես մի պատմվածք ներկայացնելու ընդունակություն,<br>• Տիրապետել պատմելու տարրական հմտությունների,<br>• Տիրապետել երկխոսության հմտությանը,<br>• Տիրապետել բառակազմության հմտությունների:<br>• Այլընտրանքային հաղորդակցման միջոցների կիրառում՝ (ժեստային հաղորդակցություն, վիզուալ դասացուցակների և և հաղորդակցմանը նպաստող նկարների կիրառում): | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Այլընտրանքային հաղորդակցման ձևերի, այդ թվում պատկերների փոխանակման հաղորդակցման համակարգի PECS ուսուցում և կիրառումը կյանքի համար նշանակալի միջավայրերում: | Այլընտրանքայի հաղորդակցման միջոցներով,այդ թվում նաև PECS-ով ֆունկցիոնալ հաղորդակցման ուսուցում:<br>PECS-ը հաղորդակցման այլընտրանքային համակարգ է, որտեղ երեխան սովորում է հաղորդակցվել այլ մարդկանց հետ՝ նկարների միջոցով՝ նրան այս կամ այն պատկերը ունեցող-քարտը տալով:<br>Միևնույն ժամանակ այն ամիջականորեն նպաստում է խոսքի զարգացմանը: | ***Ակնկալվող արդյունքները՝***<br>• Իմպրեսիվ խոսքի զարգացում<br>• Էքսպրեսիվ խոսքի զարգացում<br>• Ֆունկցիոնալ հաղորդակցման և շփման հմտությունների զարգացում<br>• Այլընտրանքային հաղորդակցման միջոցների կիրառում՝ (ժեստային հաղորդակցություն, PODD և PECS համակարգերով):<br>• Գրավոր խոսքի զարգացում | 15 շաhաոու | 15 շաhաոու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Երաժշտությունը որպես աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների ինքնաարտահայտման ոչ խոսքային հաղորդակցման և հույզերի դրսևորման միջոց: | • Խթանում է շարժողական ֆունկցիաները,<br>• Շտկում և զարգացնում է զգայական ֆունկցիաները ու հնարավորությունները,<br>• Խթանում է խոսքի զարգացմանը,<br>• Կարգավորում է խոսքի տեմպը, ռիթմը շեշտադրությունը,տեմբրը, արտահայտչականությունը:<br>Երաժշտաթերապիան իր մեջ ներառում է՝<br>• Երաժշտական ստեղծագործությունների ունկնդրում<br>• Ծանոթացում երաժշտական գործիքներին,<br>• Տարբեր երաժշտական գործիքների տիրապետում,<br>• Երգեցողություն,<br>• Երաժշտության ներքո ռիթմիկ շարժումների կատարում,<br>• Երաժշտության զուգակցում կատարվող աշխատանքի հետ: | *Ակնկալվող արդյունքները՝*<br>• Հաղորդակցման բարելավում<br>• Սոցիալական հմտությունների զարգացում<br>• Ճանաչողության և ընկալման բարելավում<br>• Ինքնական ավարման ունակությունների զարգացում<br>• Շարժողական ֆունկցիաների խթանում<br>• Զգայական ֆունկցիաների ու հնարավորությունների շտկում և զարգացում<br>• Խոսքի զարգացման խթանում<br>• Խոսքի տեմպի, ռիթմի, շեշտադրության և տեմբրի կարգավորում<br>• Երաժշտական թերապևտիկ տեխնիկաների և համապատասխան ընտրված երաժշտության միջոցով ընդօրինակման և նմանակման զարգացում<br>• Նոր երաժշտական գործիքների միջոցով նոր երաժշտակյան հմտությունների ձևավորում | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.3 | Արտթերապիայի հիմնական դրույթների կիրառումը աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների համար | • Ինքնավերահսկման և ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունների զարգացում<br>• Երևակայության զարգացում:<br>• Տարածական ընկալման զարգացում:<br>• Ստեղծագործական գործունեության զարրգացում:<br>• Երեխայի հետ սոցիալական միջավայրի հետ փոխաձգեցության փորձի հարստացու:<br>• Գունաճանաչողությն, երկրաչափական պատկերների ընկալման և կառուցողական կարողություններրի ձևավորում, զարգացում:<br>• Համատեղ ուշադրության և գործունեությաան զարգացում:<br>• Ոչ խոսքային նմանակման զարգացում արտթերապևտիկ վարժությունների և տեխնիկաների կիրառման միջոցով:<br>• Աշխատանք հուզական հակազդումների հետ: | *Ակնկալվող արդյունքները՝*<br>• Բարելավում է սիմվոլիկ մտածելու և երևակայելու ունակությունը<br>• Բարելավում է դեմքի տարբեր արտահայտությունների ընկալումը / ճանաչողությունը և նրանց հանդեպ համապատասխան արձագանքումը<br>• Բարելավում է զգայական խնդիրները<br>• Զարգացնում է մանր մոտորիկան<br>• Զարգացնում է ուշադրության կայունությունն ու կենտրոնացվածությունը<br>• Բարձրացնում է աշխատունակության մակարդակը<br>• Զարգացնում է գույների և գունային գամաների ճանաչողականությունը և տարբերակումը: | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.4 | Ինքնասպասարկամ, ինքնավերահսկման և ֆունկցիոնալ միջանձնային փ ո խ հարաբերություննե ր հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում՝ էրգոթերապիայի, պարային թերապիայի, շրջանակներում | Էրգոթերապիայի հիմնական նպատակն է սովորեցնել երեխաներին ինքնուրույն կենցաղավարության, հնարավորինս ինքնուրույն ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ,որոնք կարևոր են տվյալ երեխայի համար և բարձրացնում է կյանքի որակը:<br><br>Կենտրոնում էրգոթերապիան ներառում է աշխատանք մի քանի ոլորտներում"<br>1.Զգայական ինտեգրացիա<br>2.Զբաղվածությունների, կենցաղային հմտությունների ձեռքբերում<br>• Ինքնասպասարկում<br>• Գնումներ խանութից<br>• Ուտեստների պատրաստում<br>• Ժամանց<br>• Աշխատանքային հմտությունների ձեռքբերում<br>• Ձեռքի աշխատանք<br>3"Պար<br>• Ռիթմիկայի զարգացում<br>• Շարժողական շղթայական վարքերի ուսուցում<br>• Շարժողական ռելաքսացիա | *Ակնկալվող արդյունքները՝*<br>• Կենցաղային և ինքնասպասարկման և ինքնախնամքի հմտությունների զարգացում ՝ (Լվանալ ատամները, լվացվել, սանրվել, հանվել, հագնվել, կոշիկ հագնել, կապիչ կապել, կոճակ կոչկել, եղունգ կտրել):<br>• Խոհանոցային հմտությունների ձեռքբերում՝ ( Պիցցայի, աղցանների, թխվածքների, կեքսերի, ֆոնշի, աղիրուղիի, թեյի պատրաստման ձևերի և եղանակների ուսուցում, ինչպես նաև խոհանոցային սպասքի լվացում, չորացում և դասավորում պահարաններում, մթերքների սորտավորում, լվացում,կտրատում և պահեստավորում: Խոհանոցային տեխնիկայից օգտվելու հմտությունների ձևավորում):<br>• Զբաղվածությունների ներդնում՝ (թելերից ձեռագործ պայուսակների պատրաստում, ուլունքագործություն՝ թևնոցներ, վզնոցներ):<br>• Զգայունակության զարգացում<br>• Մանր և խոշոր մոտորիկայի զարգացում<br>• Մարմնի ճկունության զարգացում<br>• Մարմնի ճանաչողության զարգացում<br>• Խաղային գործունեության զարգացում | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.5 | Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | Աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների 1/3 ունի նաև գերակտիվության և ուշադրության պակաս,տակտիլ և հավասարակշռության զգայարանների գեր և թեր՝ զգայունակություն,ինչը հանգեցնում է սեփական շարժումների դժվար վերահսկողություն, գերշարժունություն կամ թերշարժունություն,ինչպես նաև Աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաները ունեն նաև մանր և խոշոր մոտորիկայի խանգարումներ և շատ հաճախ նրանք չեն կարողանում կատարել ամենատարրական շարժումները: Սովորել ՝ լողալ, ցատկել, ճիշտ վազել, քայլել, բարձրանալ աստիճաններով, հաղթահարել տարբեր տարրական խոչընդոտներ (դռներ, անկյուններ, անցքեր) և այլն: Կենտրոն են հաճախում նաև այլ զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ,որոնք ունեն շարժողական դժվարություններ: Ադապտիվ ֆիզկուլտուրան նպաստում է կանոններին ենթարկվողականության ձևավորմանը, հրահանգներին առավել արագ և հստակ արձագանքելուն: | ***Ակնկալվող արդյունքները՝***<br>• Սովորել սողալ, ցատկել, ճիշտ վազել, բարձրանալ և իջնել աստիճաններով, հաղթահարել տարրական խոչընդոտները (դռներ, անկյուններ, անցքեր) և այլն: Խաղալ տարբեր ակտիվ շարժախաղեր, սովորել վարել հեծանիվ, ինքնագլոր և անվաչմուշկ, հասկանալ խաղի կանոնները, կարողանալ սպասել, խաղալ խմբային խաղեր և սովորել համագործակցել խմբի անդամների հետ, տարբերակել գույներ և երկրաչափական պատկերներ,և այլն: Կարևոր է ոչ միայն սովորեցնել, այլ նաև այդ բոլոր կանոնները ամրապնդել և ընդհանրացնել:<br>• Ակադեմիական պարապմունքների ընթացքում ուշադրության կենտրոնացման բարելավմանը, կանոնների պահպանման հմտությունների ձևավորում և նստակյացության բարելավվում: | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Սոցիալիզացիայի շրջանակներում՝ ֆունկցիոնալ սոցալական հմտությունների ձևավորում և զարգացման, հասարակական տարբեր վայրերում սոցիալական կանոնների և նորմերի պահպանումը | Կենտրոնում սոցիալական ծրագրերը ներառում է աշխատանք մի քանի ուղղություններ"<br>• Աշխատանք ընտանիքի հետ<br>• Ներառում հասարակական տարբեր վայրեր | Կատարված աշխատանքների արդյունքում երեխաները կարողանում են ընդգրկվել տարբեր միջավայրերում՝<br>• Կինոթատրոններ<br>• Թանգարաններ<br>• Եկեղեցիներ<br>• Հուշահամալիրներ<br>• Թատրոններ<br>• Կենդանաբանական այգի<br>• Զվարճանքի կենտրոններ<br>• Լողավազաններ<br>• Էքսկուրսիաներ<br>• Սրճարաններ<br>• Այցեր<br>բուժհաստատություններ<br>Ձեռք են բերում կենսակարևոր,ֆունկցիոնալ սոցիալական հմտություններ,կարողություններ տարբեր հասարակական վայրերում պահպանելու նորմերը և կանոնները՝ առանց լրացուցիչ վերահսկողության: | 100 շահառու | 100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **4** | Ռեսուրսային դասարանի մոդելի զարգացում աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների համար և այլ դպրոցներում, մանկապարտեզներում, զարագացման կենտրոններում՝ ուսուցիչներին մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով: | ➢ Իրականացվում է խորհրդատվություննեի տրամադրում հանրակրթական դպրոցների ուսուցիչների և նախադպրոցական հաստատությունների մասնագետների ոլորտում աշխատող այլ մասնագետնեrրի համար,<br>➢ Դպրոցներում և մանկապարտեզներում մեթոդական և թերապևտիկ մոտեցման աջակցություն ուսուցիչներին և ուղղորդող մասնագետներին, դաստիարակներին և դայակներին՝ կենտրոնի սաների ծնողների պահանջով, ինչպես նաև դպրոցների և մանկապարտեզների խնդրանքով:<br>➢ Ուսուցիչներին, դաստիարակներին, դայակներին՝ ներառման գործընթացը խթանող ռազմավարությունների կիրառման խորհրդատվություն: | *Ակնկալվող արդյունքները՝*<br>• Աուտիզմի և այլ զարգացման խանգարում ունեցող երեխաների առանձնահատկությունների մասին մասնագիտական խորհրդատվության, ուղղորդման արդյունքում գիտելիքների և փորձի փոխանցում<br>• Խնդրահարույց և ոչ հարմարվողական վարքաձևերի հետ աշխատանքներում ռազմավարությունների մասին տեղեկության փոխանցում, որի արդյունքում երեխաներն առավել դյուրին կներգրավվեն ուսուցման գործընթացի մեջ<br>• Հաղորդակցման և շփման հմտությունների բարելավման խթանում<br>• Հետագա համագործակցության ձևերքերում՝ պարբերական մասնագիտական աջակցություն և խորհրդակցություններ իրականացնելու նպատակով<br>• Ուսուցիչների,դաստիարակների, դայակների և այլ մասնագետների աշխատանքային փորձում դժվարությունների վերհանում, պարզաբանում և ուղղորդում: | 2 շաbhառու | 2 շաbhառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Խորհրդատվությունների և դասընթացների կազմակերպում ու անցկացում աուտիզմ ունեցող երեխաների ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար | Երեխայի ծնողների համար՝ երեխայի կրթության կազմակերպման, աջակցության ծառայությունների տրամադրման և սոցիալական ներառման հարցերի շուրջ խորհրդատվություններ `ըստ ծնողների պահանջի:<br>• Խմբային քննարկումներ միասնական հարցի շուրջ:<br>• Անհատական ծրագրերի և գնահատումների քննարկումներ,<br>• Անհատական խորհրդատվություն<br><br>Կենտրոնի մասնագետների շարունակական վերապատրաստում | Խմբային և անհատական հանդիպումներ և քննարկումներ ծնողների հետ:<br><br>Վերապատրաստումներ մասնագետների համար՝<br>ԿՎՎ տեսական հիմունքներ<br>ԿՎՎ հիմնարար սկզբունքներ<br>Վարքի ֆունկցիաներ<br>Խնդրահարույց վարքի հետ աշխատանքի ռազմավարությունները<br><br>Անհատական խորհրդատվություններ ծնողներին՝ ըստ պահանջի | 50 շահառու<br><br>25 ժամ<br><br>100 շահառու | 50 շահառու<br><br>25 ժամ<br><br>100 շահառու | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Շարունակական խորհրդատավական փոխայցեր ուսումնական հաստատություններ | Իրականցվում է խորհրդատվական փոխայցերին կազմակերպում Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները:<br>• Առաջ եկած խնդիրների լուծում և կարգավորում<br>• Հաջողված փորձի, քաղած դասերի ներկայացում,<br>• Համատեղ գործնական պարապմունքների իրականացում: | Խորհրդատվական փոխայցերի քանակը ուսումնական հաստատություններ՝<br>• Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ<br>• Երևանի ՃՇԱՀ քոլեջ<br><br>Խորհրդատվություններ ՆՈՒՀ-երում<br>• Երևանի թիվ 149 մսուր/մանկապարտեզ ՀՈԱԿ<br>• Երևանի թիվ 117 մանկապարտեզ ՀՈԱԿ | 2<br><br>2 | 2<br><br>2 | | |
| 7 | Ծրագրի մշտադիտարկում և արդյունքների վերլուծություն | Ծրագրի իրականացման տեղեկատվության ուսումնասիրում և հավետվությունների կազմում:<br>• Ծրագրի իրականացման եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում | Եռամսյակային հաշվետվությունների քանակը՝ 3 | 3 | 3 | | |

«Աուտիզմ ազգային հիմնադրամի» տնօրեն՝

Լ․ Աթաջանյան

Միջոցառումների անվանումները բխում են Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող՝ հավելված 2-ից:

Աուտիզմ Ազգային Հիմնադրամ
AUTISM NATIONAL FUND

04.10.2023թ.

# 2023թ. Երրորդ եռամսյակի բովանդակային հաշվետվություն:

«Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում» շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ 2023 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվություն:

Աուտիստիկ սպեկտրի խանգարումը (ASD) զարգացման նյարդաբանական խանգարում է, որը ներառում է սոցիալական փոխազդեցության, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության ինչպես նաև սահմանափակ / կրկնվող վարքի կայուն խնդիրներ:

Վաղ տարիքում աուտիզմով երեխաների ախտորոշումն ու միջամտությունը համեմատաբար ավելի մեծ արդյունքներ են տալիս՝ բացահայտելով անհատի հնարավորինս բարձր պոտենցիալը՝ նրանց ընձեռնելով շրջակա աշխարհին հարմարվելու և հասարակության լիարժեք անդամ դառնալու հնարավորություն:

**Կենտրոնում իրականացվող հիմնական ծրագրերը՝**

- **Կիրառական Վարքային Վերլուծություն (ABA)-Վարքային թերապիա**
- **Խոսքային թերապիա**
- **Օկուպացիոն թերապիա (էրգոթերապիա)**
- **Արտթերապիա**
- **Երաժշտաթերապիա**
- **Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա**
- **Պարային թերապիա**
- **Սոցիալական ծրագրեր**
- **Ներառական ծրագրեր**
- **Խորհրդատվություն և հոգեբանական աջակցություն**
- **Տեսագործնական վերապատրաստումներ ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար**

**1 Կիրառական վարքային վերլուծություն**

Հիմնական մեթոդը, որը կիրառվում է, Կիրառական վարքային վերլուծությունն է (ԿՎՎ/ ABA), որն հնարավորություն է տալիս մշակել համապատասխան ծրագրեր՝ հիմնվելով երեխայի վարքի, մտավոր ունակությունների և հմտությունների մանրակրկիտ հետազոտման վրա: Բոլոր վերոնշյալ ակնկալվող արդյունքները գնահատվում են ԿՎՎ-ում առկա գնահատման համապատասխան չափորոշիչներով: Կենտրոնի սաները գնահատվում են VB-mapp-ի տեղայնացված գնահատման գործիքով, և արդյունքների հիման վրա յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական ծրագիր:

Ստորև ներկայացված է 2023թ. երրորդ եռամսյակի ընթացքում «Կիրառական Վարքային Վերլուծություն» (ABA) և «Վերբալ վարքի միջամտություն» (Verbal Behavior Intervention) ծրագրերի շրջանակներում իրականացվող հետևյալ հիմնական դրույթները, որոնց շուրջ տարվում են շարունակական աշխատանքներ յուրաքանչյուր շահառուի հետ՝ առաջնորդվելով իր անհատական ակադեմիական ծրագրով: Յուրաքանչյուր երեխայի համար դրվում է երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակադրումներ՝ երեխայի գիտելիքների, հմտությունների, գազացման փուլերի, խոչընդոտների և տարածական տեղափոխելիության գնահատման արդյունքների հիման վրա (VB-Mapp):

**ABA ծրագրի կազմակերպման համար իրականացվում է որոշումների կայացման հետևյալ հիմնական մեխանիզմը:**

Քայլ 1. Թիրախային վարքի ընտրություն

Քայլ 2. Վարքի վերաբերյալ որակական և

քանակական տվյալների հավաքագրում

Քայլ 3. Միջամտության ռազմավարության ընտրություն

Քայլ 4. Միջամտության ռազմավարության կիրառում

Քայլ 5. Առաջընթացի գնահատում

**2023թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ընթացքում ԿՎՎ ծրագրի շրջանակներում թերապիա են ստացել 1-14 տարեկան 100 շահառու:**

Շահառուները ներառվել են տարբեր մանկապարտեզներ և ներառական դպրոցներ: Նրանց ծնողները ստացել են համապատասխան խորհրդատվություն: Ծնողների խնդրանքով իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն, խնդրահարույց վարքերի հետ աշխատանքների ռազմավարություն և փորձի փոխանակում դպրոցկան և նախադպրոցական հաստատությունների մանկավարժների,մասնագետների հետ:

7 շահառու երրորդ եռամսյակի ընթացքում, տարբեր պատճառներով (ընտանեկան, առողջական, երկրից մեկնելու, հեռավորության, դպրոց կամ մանկապարտեզ գնալու), դուրս են եկել ծրագրից և/կամ ավարտել են ծրագիրը:3 շահառու տեղափոխվել է դեռահասակների և երիտասարդների ծրագիր: Ծրագիրը համալրվել է 1-9 տարիքային խմբի ևս 12 շահառույով: Շահառուները ներգրավվել են համապատասխան խմբերում, շահառուները դիտարկվել են և գնահատվել: Կազմակերպվել են ծնողների խորհրդատվություն, ներկայացվել են երեխաների նախնական անհատական հարմարման ծրագրերը:

Վերբալ վարքի միջամտության ծրագրի շրջանակներում թերապիան շարունակող շահառուների անհատական ծրագրերը երրորդ եռամսյակի ընթացքում վերանայվել են, ըստ ծրագրի արդյունքների և առաջընթացի, իրականացվել է վերագնահատում, նոր երկարաժամկետ և կարճաժամկետ նպտակադրումների սահմանում: Ինչպես նաև վերագնահատված շահառուների ծրագիրը համալրվել է նյութի պահպանմանը և ընդհանրացմանը նվիրված հատուկ վարժություններով և միջոցառումներով:

**2. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում**

**2.1 Խոսքի ընկալունակության և զարգացման վաղ միջամտությունը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների մոտ**

Երեխաների հետ աշխատանքը իրականացվում է ինչպես խմբային այնպես էլ անհատական: Խմբային աշխատանքի ժամանակ կարևորվում է այն փաստը, որ երեխաները սովորում են սոցիալական հմտություններ և կարողություններ: Կարևորվում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորումը և խոսքը որպես ֆունկցիոնալ հաղորդակցման միջոց կիրառումը:

Ըստ ծնողների պահանջի իրականացվում են ծնող- մասնագետ հանդիպումներ, որի ժամանակ մասնագետները ներկայացնում են յուրաքանչյուր երեխայի համար մշակված ծրագիրը՝ երեխայի զարգացմանը համապատասխան:

Երրորդ եռամսյակի ընթացքում սահմանվել են հետևյալ նպատակադրումները՝

- Իմպրեսիվ խոսքի զարգացում
- Էքսպրեսիվ խոսքի զարգացում:
- Բառապաշարի հարստացում
- Ձայնային վարժությունների համակարգ
- Մանր մոտորիկայի զարգացում
- Սոցիալական հաղորդակցման /social play/ ձևավորումը և զարգացումը
- Որպես այլընտրանքային հաղորդակցման միջոց կիրառվում է PECS-ը և PODD /

Խմբային պարապմունքների ժամանակ երեխաների հետ տարբեր թեմատիկ աշխատանքների ընթացքում ձևավորվում է հասակակիցների հետ փոխհարաբերություններ հաստատելու սոցիալական հմտություններ,երեխաները սովորում են տալ հարցեր և պատասխանել հարցերին, կատարել փոքր տեքստերի վերլուծություն, քերականորեն հստակ և հասկանալի կառուցել նախադասությունները:

Պատրաստում ենք փոքրիկ բեմականացումներ երեխաների մասնակցությամբ:

## 2.2. Երաժշտությունը՝ որպես աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների ինքնարտահայտման, ոչ խոսքային հաղորդակցման եվ հույզերի դրսեվորման միջոց:

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում երաժշտաթերապիայի շրջանակներում աշխատանք է իրականացվել թվով 100 երեխայի հետ:

Ծրագիրը իրականացվել է անհատական և խմբային տարբերակներով՝ 30 րոպե տևողությամբ:

• Երաժշտական թերապիան իրականացվել է 2-14 տարեկան երեխաների հետ: Խմբային պարապմունքներին մասնակցել են 2-5 երեխաներ միաժամանակ՝ 30 րոպե տևողությամբ:Նույն տևողությամբ իրականացվել են նաև անհատական պարապմունքները:

• երեխաների հետ իրականացվել են դաշնամուրի անհատական դասընթացներ:

• Խմբային պարապմունքների միջոցով աշխատել ենք երեխայի հաղորդակցման, ունկնդրելու, սպասելու և համատեղ աշխատանքներ իրականացնելու ունակությունները զարգացնելու ուղղությամբ:

• Երաժշտական թերապիայի ընթացքում իրականացվել է կենդանի երաժշտության ունկնդրում, ինչպես նաև օգտագործվել են տարբեր ձայնագրություններ, հաշվի առնելով տվյալ դասական ստեղծագործության ազդեցությունը երեխայի նյարդային համակարգի վրա (օգտվելով տարբեր գիտական ուսումնասիրություններից):

• Օգտագործվել են տարբեր երաժշտական գործիքներ՝ (դափ, զանգակներ, քսիլաֆոն, թմբուկ, կաստանետներ, մարակաս և այլն) հաշվի առնելով երեխայի առանձնահատկություններն ու նախասիրությունները:

• Համապատասխան ստեղծագործությունների ընտրությունը և լոգոպեդի հետ համատեղ աշխատանքը նպաստել է խոսքի, մանր մոտորիկայի զարգացմանը, ուշադրության կենտրոնացմանը, ֆիզիկական ակտիվությանը:

• Օգտագործելով կիրառական վարքային վերլուծության սկզբունքները, կատարվել է վարքի շտկում երաժշտության միջոցով՝ ձևավորելով նոր ադպտիվ վարքեր:

### 2.3. Արտթերապիայի հիմնական դրույթների կիրառումը աուտիզմ սպեկտրի խանգարում ունեցող երեխաների համար

Երրորդ եռամսյակի ընթացքում աշխատանք է իրականացվել թվով 100 երեխայի հետ: Յուրաքանչյուր երեխայի համար նախնական դիտարկումից հետո կազմվել է անհատական ծրագիր և յուրաքանչյուրի համար սահմանվել են եռամսյակային նպատակադրումները:

**Խմբային ծրագրերի աշխատանքի նպատակն է՝**

- Խմբային աշխատանքների շնորհիվ խթանել երեխաների շփման և հաղորդակցման հմտությունների զարգացումը, նաստել խմբային հմտությունների զարգացմանը:
- Նպաստել հուզակամային դրսևորումների ճանաչմանը, արտահայտմանը, նպաստել հոգեհուզական լարվածության թուլացմանը:
- Նպաստել ոչ վերբալ ինտելեկտի զարգացմանը, նպաստել փոխվստահության, փոխհամագործակցության և փոխօգնության զարգացմանը:
- Աջակցել միջանձնային շփման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը

**Անհատական ծրագրերի նպատակադրումներ**
**մաս 1-ին**

• Զարգացնել ուշադրության կայունությունն ու կենտրոնացվածությունը: Նկարչական գործընթացում ֆորմաների ընդօրինակումը, գծերի և պարզագույն ստերեոտիպային ձևերի ստեղծումը:

• Երեխայի մոտ ստեղծել հուզական դրսևորումների դրական վիճակ փնտրելով համապատասխան արտթերապևտիկ տեխնիկաներ, (հույզերի քարտիկ արտահայտում- ներկեր ցփնելը, վրձնով հարվածները, ներկ քսելը և այլն):

• Արտթերապևտիկ տեխնիկաների միջոցով նպաստել ագրեսիայի կառավարմանը, հոգեհուզական բացասական դրսևորումների հաղթահարմանն ու կարգավորմանը (ստեղծագործական ինքնաարտահայտման թերապիայի «ՍԻԹ» մեթոդ):

• Բարձրացնել աշխատաունակության մակարդակը

**Անհատական ծրագրեր**
**մաս 2-րդ**

Անհատական ծրագրի նպատակադրումները հիմնվում են երեխայի զգայական (հոտառության, շոշափման և ըպման արձագանքը) ինքնախթանիչ և կրկնվող վարքային դրսևորումների վրա :

• «Զգայական նկարչություն» նկարչական տեխնիկա

• «Գունավոր գդալներ» նկարչական վարժություններ

• «Տաք և սառը» աշխատանք կինետիկ ավազով

• «Ավազանկարչություն» զարգացնող, թերապևտիկ աշխատանք ավազով:

2.4. **Կավաթերապիա**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կավաթերապիային մասնակցել է 100 երեխա, իրականացվել են անհատական և խմբային պարապունքներ:

**Խմբային աշխատանքների ընթացքում երեխանների մոտ ձևավորվել է՝**

1.Հաղորդակցման տարրական հմտությունների ձևավորումը (օգտագործելով իրենց հասանելի հաղորդակցման միջոցները՝ դիմել հասակակիցներին և մեծահասակներին, արտահայտել ցանկությունները),

2. Համբերատարություն, կանոններին ենթարկվելու կարողություն:

Խմբում ներառված է եղել մինչև 1-3 երեխա:

Անհատական կավաթերապիայի պարապմունքները զուգակցվել են հոգեբանական աշխատանքների հետ՝ այդ կերպ նկատելիորեն մեծացել է թերապևտիկ արդյունքը: Կավաթերապիայի միջոցով հնարավոր է դարձել դրական ազդեցություն ունենալ երեխանների տրամադրության, մտածողության, երևակայության վրա, նվազեցնել նյարդա-հոգեկան լարվածությունը, հաղթահարել վախերն ու անվստահությունը, զարգացնել ստեղծագործական միտքը, նախապատրաստել մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: Սեփական ձեռքով պատրաստելու արդյունքում երեխանները ձեռք են բերել, սեփական հնարավորությունների ու կարողությունների հանդեպ վստահություն:

2.5. **Ինքնասպասարկման, ինքնախնամքի ինչպես նաև ինքնակառավարման և պատշաճ միջանձնային հարաբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում:**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում էրգոթերապիայի ծառայություններից օգտվել են թվով 100 երեխա:

**Էրգոթերապևտիկ միջամտության հիմնական ոլորտներն են**

• Առօրյա/ինքնասպասարկման ինքնախնամքի գործողություններ
• Մանր և խոշոր շարժունակություն
• Զգայական ինտեգրացիա
• Խոհանոցային հմտությունների ձևավորում
• Խաղային գործունեություն
• Սոցալիզացիայի ծրագիր
• Ինքնասպասարկման հմտությունների ձևավորում

Շահառուների ծրագրի կազման համար օգտագործվում են անհատական մոտեցում, հաշվի են առնվում երեխաների ֆիզիկական, սոցիալական, հուզական, զգայական և ճանաչողական կարողություններն ու կարիքները:

Թերապիան համատեղում է տարբեր ռազմավարություններ՝ օգնելու երեխաներին ավելի լավ արձագանքել իրենց միջավայրին:

**Այս ռազմավարությունները ներառում են.**

• Միջամտություններ, որոնք կօգնեն երեխային ճիշտ արձագանքել զգայարանների միջոցով եկող ազդակներին:

• Նպաստել խաղային գործունեությանը՝ սովորեցնել և օգնել երեխաներին շփվել այլ մարդկանց հետ:

• Ռազմավարություններ, որոնք կօգնեն երեխային անցնել մի միջավայրից մյուսը, մի առաջադրանքից մյուսը և մի գործունեությունից մյուսը:

**Առօրյա գործողություններ՝**

հանվել/հագնվել, ընտրել եղանակին համապատասխան հագուստ, տարբերակել հագուստի ճիշտ և սխալ կողմերը, սանրվել, ատամներ լվանալ, լվացվել, զուգարանից օգտվելու հմտություններ, խոհանոցային հմտությունների ձևավորում, մասնագիտական հմտությունների ձևավորում:

**Խոհանոցային հմտությունների ձեռքբերում՝**

Նպատակադրվել են սովորեցնել պատրաստել 9 տեսակի ուտեստներ և ըմպելիքներ՝ Ֆռեշ, թեյ, մրգային և բանջարեղենային աղցաններ, թխվածքաբլիթներ և թխվածքներ, պիցցա, պոպկորն:

**Խոշոր շարժունակություն՝**

մարմնի դիրքը փոխել, ցատկել, կքանստել, ծնկի իջնել, մարմնի հավասարակշռությունը պահել և ծանրության կենտրոնը փոխել, բռնել մեծ առարկաներ, բարձրացնել, մի տեղից մյուսը տեղափոխել, նստել, նետել, գլորել:

**Մանր շարժունակություն՝**

Ուլունք թելել, գրիչ, մատիտ բռնել, մկրատով կտրել, ունելի (пинцет) բռնել, ծեփով աշխատել, կոճակ կոճկել, կապիչներ կապել, շղթան կոճկել, մանր և խոշոր, տարբեր հարթությունների և ձևերի առարկաներ առանձնացնել և այլն:

**Զգայական ոլորտ՝**

Համ, հոտ, լսողություն, տեսողություն, շոշափելիք/տակտիլ, վեստիբուլյար, պրոպրեոցեպտիվ համակարգերի զգայական ազդակների ապահովում:

**Զգայական համակարգի աշխատանքը խթանելու համար կիրառվել են՝**

- ❖ Զգայական ինտեգրացիայի
- ❖ Դեսենսիբիլիզացիայի մեթոդները

**Խաղային գործունեություն՝**

Կիրառվել են կառուցողական, զգայական, նաև դերային/երևակայական խաղեր:

Թերապիայի վերջնանպատակն է երեխայի առավելագույն ինքնուրույնությունը՝ իր առօրյա գործողությունները կատարելու ընթացքում:

**2.6. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա**

Աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաներց 1/3-ի մոտ առկա է ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ, ինչպես նաև տակտիլ,պրոպրոեպտիվ հավասարակշռության թեր կամ գեր զգայունակություն, որի արդյունքում երեխաների մոտ առաջանում են շարժումների վերահսկողության , կոորդիլացիայի և այլ շարժողական խնդիրներ:Շարժողական դժվարություններ ունեն նաև կենտրոն հաճախող զարգացման այլ առանձնահատկություններ ունեցող երեխաներ: Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի շրջանակներում երեխաները սովորում են սողալ, ցատկել, ճիշտ վազել, քայլել աստիճաններով, հաղթահարել տարրական խոչընդոտները (դռներ, անկյուններ, անցքեր) և այլն: Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի շրջանակներում երեխաները սովորում են նաև պահպանել կարգ ու կարգ ու կանոնը,արագ ր հստակ արձագանքել հրահանգներին, առավել բարելավվում է վարքի ինքնավերահսկողությունը, սպսելու, խմբում աշխատելու հմտությունները:

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ծրագրում ընդգրկվել են՝ 100 երեխա: Ելնելով երեխաների հմտությունների գնահատման արդյունքներից՝ պարապմունքները իրականացվել են անհատական և խմբային:

**Ծրագրի հիմնական գործառույթներն են՝**

**Ֆիզիկական կուլտուրայի դասերին երեխայի մոտիվացիոն գործունեության ճիշտ օգտագործումը**

- Երեխայի համար ուսուցման միջավայրի ստեղծում
- Զգայական բեռնաթափման վարժություններ, նյարդային լարվածությունը թեթևացնելու համար
- Շարժումները, որոնք համարժեք են երեխայի մարմնի ֆիզիոլոգիական հնարավորություններին, միշտ առողջության բարելավման գործոն են:

**Պարային թերապիա՝**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում պարային ծրագրում ընդգրկվել են՝ 100 երեխա: Ելնելով երեխաների հմտությունների գնահատման արդյունքներից՝ պարապմունքները իրականացվել են անհատական և խմբային՝ 30 րոպե տևողությոմբ, խմբային ձևաչափով:

**Ծրագրի հիմնական գործառույթներն են՝**

Երեխաների մոտ ձևավորվում է մարմնի ճկունություն, շարժվելու կարողություն տարբեր երաժշտական ռիթմերի տակ:
Մարմնաշարժողական հոգեթերապևտիկ գործընթացում, երեխաների մոտ տեղի է ունենում զգայական լիցքաթափում:

**3. Ռեսուրսային դասարանի մոդելի զարգացումը աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների համար**

Դպրոցներում և մանկապարտեզներում մեթոդական և թերապևտիկ մոտեցման աջակցություն ուսուցիչներին ուղղորդող մասնագետներին, դաստիարակներին և դայակներին՝ կենտրոնի սաների ծնողների պահանջով, ինչպես նաև դպրոցների և մանկապարտեզների խնդրանքով: Ուսուցիչների և ծնողների համար ճանաչողական ֆիլմերի ցուցադրությունների և սեմինարի կազմակերպում: Կենտրոնի ներառական ծրագրի նպատակն է, աջակցել նախադպրոցական և դպրոցական տարիքիային խմբի աուտիզմ ունեցող երեխաներին: Աշխատանքները իրականացվում են տարբեր դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում՝ մեր մասնագետների կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է, աջակցել աուտիզմ ունեցող երեխաների համատեղ ուսուցման կազմակերպմանը, միջավայրի խելամիտ հարմարեցմանը և առանձնահատուկ պայմանների ստեղծմանն ու ապահովմանը: Ծրագրի իրականացման հիմքում, ինչպես միշտ, հաշվի է առնվել երեխաներից յուրաքանչյուրի զարգացման առանձնահատկությունները կրթական հմտությունների զարգացման հարցում: Յուրաքանչյուր երեխայի համար առաջարկվում է տվյալ երեխայի զարգացմանը համապատասխան մեթոդական օգնություն, որտեղ հաշվի է առնվել մատչելիության և հասանելիության սկզբունքները"

- Նյութի հասանելիություն
- Մասնակցություն դասապրոցեսին
- Մատչելիություն
- Առաջընթաց

**4. Սոցիալիզացիայի ընթացքում ինքնուրույնության զարգացման ու հասարակության նորմերի և կանոնների պահպանման հմտությունների ձևավորման մոդելի կիրառում**

5.

Սոցյալիզացիայի ծրագրերի շրջանակներում 2023թ երրորդ եռամսյակի այցելություններն են՝

- Սևանի վանք (2 այց)
- Գառնի հեթանոսական տաճար (5 այց)
- Զվարթնոցի տաճար (1 այց)
- Ջրվեժ անտառ պարկ (2 այց)
- Բուսաբանական այգի (2 այց)
- Խամաճիկների թատրոն (2 ներկայացում կենտրոնում)
- Ավետիս թատրոն (1 ներկայացում կենտրոնում)
- Երևան Սիթի տուր (1 այց)
- Մոսկվա կինոթատրոն (3 այց)
- Օհանավանք (2 այց)
- Հաղթանակ զբոսայգի(1 այց)
- Նանսենի այգի (1 այց)
- Մեգամոլ (4 այց)

Ընդհանուր իրականացվել է 27 սոցիալիզացիայի այց/այց կենտրոն:

**Նպատակներ**

- Տարբեր սոցիալական վայրերում սոցիալական կանոնների և ներմերի ուսուցում, սոցիալական ակնկալիքներին համապատասխան
- Ֆունկցիոնալ սոցիալական հմտությունների և կարողությունների ուսուցում
- Սոցիալական տարբեր միջավայրերում անվտանգ վարքերի ուսուցում
- Կենտրոնում ձեռք բերված գիտելիքների ընդհանրացում
- Սոցիալական տարբեր միջավայրերում տագնապների և զգայական խնդիրների հաղթահարում
- Երեխան ծնողների հետ և երեխան առանց ծնողների ճանապարհի հաղթահարում
- Տրանսպորտից օգտվելու կարողություն
- Առանց խնդրահարույց վարքերի երկարատև ճամփորդելու կարողություն
- Ճանապարհահրանսպորտային կանոնների ուսուցում
- Ծնողների հետ երեխաների հարաբերությունների դիտարկում
- Համագործակցություն ծնողների միջև
- Մասնագետ- երեխա շփումը այլ միջավայրում
- Գիտելիքների ամրապնդում

**6. Խորհրդատվությունների և դասընթացների կազմակերպում ու անցկացում աուտիզմ ունեցող երեխաների ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում թիվ 17 հատուկ դպրոցի և այլ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների նաև զարգացման կենտրոնների հետ համագործակցություն:

- ✓ 17 հատուկ դպրոցի հետ համագործակցությունը շարունակվել է գույքադարանի շրջանակներում,որը նախատեսված է Աուտիզմ ազգային հիմնադրամի սաների համար: Իրականացվել է իրազեկում, ծնողներին ծրագրի ներկայացում, ծնողների ուղղորդում՝ ինչպես կարող են օգտվել գույքադարանից:
- ✓ Շարունակվում են այցեր դպրոցական և նախադպրոցական հաստատություններ՝ մասնագետներին,մանկավարժներին և ծնողներին իրազեկելու, խորհրդատվություններ ապահովելու նպատակով: Երրորդ եռամսյակում իրականացվել է 2 այց նախադպրոցական հաստատություններ՝ Երևանի թիվ 149 մսուր/մանկապարտեզ ՀՈԱԿ և Երևանի թիվ 117 մանկապարտեզ ՀՈԱԿ:

**6. Սեմինարներ և վերապատրաստումներ կենտրոնի մասնագետների համար**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կենտրոնի անձնակազմը մասնագիտական վերապատրաստում է անցել 25 ժամ տևողությամբ Կիրառական վարքային վերլուծության (ԿՎՎ) հիմունքները հետևյալ ենթաթեմաներով՝

- ԿՎՎ տեսական հիմունքներ
- ԿՎՎ հիմնարար սկզբունքներ
- Վարքի ֆունկցիաներ
- Խնդրահարույց վարքի հետ աշխատանքի ռազմավարությունները

**7. Իրազեկում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում մեթոդական օգնությունների ցուցաբերում**

2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել է իրազեկումների շարք՝ դասախոսական անձնակազմի և ուսանողների հետ (Աուտիստիկ սպեկտրի խանգարման և կենտրոնում իրականացվող վերականգնողական թերապիաներ) թեմայով նորքոհիշյալ ուսումնական հաստատություններում՝

- Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ
- Երևանի ՃՇԱՀ քոլեջ

Տնօրեն՝
Լ. Աթաջանյան